ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 71-Ա

«31»մարտի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 39/3 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆՆԵՐ ԿԱՌԼԵՆ ՀԱԿՈԲԻ ՏՈՄՈՅԱՆԻ ԵՎ ԼԻԱՆԱ ԳԵՈՐԳԻԻ ՏՈՄՈՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ 96,40 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ. 10-րդ, 11-րդ կետերի, 16-րդ կետի ա) ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Կառլեն Հակոբի Տոմոյանի դիմումը /մուտքագրված Ամասիայի համայնքապետարանում 09.02.2022թ.,թիվ 14/ համայնք Ամասիա բնակավայր Ամասիա 2-րդ փողոց, 39/3 հողամաս հասցեավորմամբ բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասում / հիմքը՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 30062015-08-0002 վկայական / ինքնակամ կառուցված՝ 96,40 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունը օրինականացնելու վերաբերյալ և հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը՝

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակավայր Ամասիա 2-րդ փողոց, 39/3 հողամաս հասցեում գտնվող Կառլեն Հակոբի Տոմոյանին և Լիանա Գեորգիի Տոմոյանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող 0,05 հա մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված՝ 96,40 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունը ճանաչել օրինական:

2.Շինության օրինականացման համար սահմանված վճարը կազմում է 125960 (հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր վաթսուն)ՀՀ դրամ:

3.Վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4.Պարտավորեցնել հողի սեփականատիրոջը սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքը ենթարկել պետական գրանցման:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«31» մարտի 2022 թվականի
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 72-Ա

«31» մարտի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՍԵՅՐԱՆ ԳԱՌՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Սեյրան Գառնիկի Սարգսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ

1. Սեյրան Գառնիկի Սարգսյանին 2022 թվականի ապրիլի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրի վարչական ղեկավար:
2. Աշխատավարձը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի սահմանած դրույքաչափին համապատասխան :

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«31» մարտի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 73-Ա

«31» մարտի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՍԱՄՎԵԼ ՄԱՐՏԻՆԻ ԷԳՆԱՏՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 1.2-1/ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշման 16-րդ կետը և Սամվել Մարտինի Էգնատոսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ

1. Սամվել Մարտինի Էգնատոսյանին 2022 թվականի ապրիլի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածագիր՝1.2-1/ ժամանակավոր պաշտոնակատար:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:
3. Աշխատավարձը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի սահմանած դրույքաչափին համապատասխան :

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«31» մարտի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 74-Ա

«31» մարտի 2022 թվականի գյուղ Ամասիա

ԱՐՄԻՆԵ ՋՈՆԻԿԻ ԽԱՍԻԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ և ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 2.1-2/ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշման 16-րդ կետը և Արմինե Ջոնիկի Խասիկյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ

1. Արմինե Ջոնիկի Խասիկյանին 2022 թվականի ապրիլի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի /ծածագիր՝ 2.1-2/ ժամանակավոր պաշտոնակատար:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:
3. Աշխատավարձը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի սահմանած դրույքաչափին համապատասխան :

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«31» մարտի 2022 թվական
գյուղ Ամասիա